

17 FEB 2010

338 //

Հ-66

ԿԿՅԵՄ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻճԱՆԻ  
ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԻՆգ ԶԵՎԸ

Հ. Խ. Ա. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ — 1926

28 JUN 2013

1486Մ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻճԱՆԻ

ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

№ 2  
6

ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԻՆգ ԶԵՎԸ



Հ. Խ. Ա. Հ. ՊԵՏՈՎԱՆ ՀՐԱՄՐԱԿՉՈՒՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926

## ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՆգ ԶԵՎԸ

Մեծ ե մեր յերկիրը, տարբեր են բնական պայմանները մեր Միության զանազան վայրերում։ Տարբեր են նաև մեր ժողովրդական տնտեսության առանձին ժամանելը։

Հյուսիսի ծայրում սամոյեցի տնտեսությունն ե, վորի միակ գույքն ու կյանքի միջոցները հյուսալին յեղջերուների հոտն ե։ Բայց ահա ձեզ Պուտիլովյան գործարանը տասնյակ հազարավոր բանվորներով, գործարանացին վիթխարի շենքերով։ Հյուսիսարևմտյան մասում Զերեպովեցի շրջանում մանր գյուղացիական հետամնաց տընտեսություն ե՝ պապական արորով։ Յեվ նրա կողքին, նույն Հյուսիսարևմտյան շրջանում, գտնվում է Վոլխովստրոյի հսկայական ելեքարուկայանը, վորաեղ հարյուր մարդուց ել քիչ բանվորներ լսապասագորում են արդյունաբերական ամբողջ Լենինգրադի ելեկտրական ուժ մատակարարող մի հսկայական կառուցվածք։ Այդպիսի համեմատություններ կարելի յեր չափազանց շատ բերել։

Փորձենք մոտիկից դիտելու մեր յերկիրի ալճ-

տեսությունը և ծանոթանությունը նրա զանազան մասերին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՆԴ «Պարենհարկի մասին» գրք- ԶԵՎԸ.

Քույկում, վոր գրված ենոր տնտեսական քաղաքականության սկզբում (1921 թ.), և գեռ դրանից ել առաջ 1918 թ., Լենինը մատնանշել է, վոր մեր յերկրում կա տնտեսական հինգ ձեւ.—

1. Նահապետական, այսինքն նշանավոր չափով բնական, գյուղացիական տնտեսություն.

2. Մանր ապրանքային արտադրություն (այս շարքին ե պատկանում հացահատիկ ծախող գյուղացիների մեծամասնությունը).

3. Մանատիրական կապիտալիզմ.

4. Պետական կապիտալիզմ.

5. Սոցիալիզմ:

Առանց բացատրության մեր ընթերցողները դժվարությամբ կը յուրացնեն Լենինից վերցրած այս մեջբերումը, Բայց մենք կաշխատենք հաղթահարել դժվարությունները, Մենք կաշխատենք ընթերցողին որինակներով ծանոթացնել թված ձևերին, գիտել, թե ինչպիսի հատկանիշներ ունի այդ ձևերից յուրաքանչյուրը:

Տնտեսական ձևերը քննության առնենք այն կարգով, ինչ կարգով ավել ե լուսինը, Ականք նահապետական տնտեսությունից, Այդ ձևին մենք

ծանոթանում ենք Զերեպովեցի նահանգի Տիլ- վինսկի գավառի Նեղաշեցկի գավառակի գյուղացիության տնտեսություն միջոցով:

ՆԵՐԱՇԵՑԿԻ Ահա թե ինչպես ե վարում ԳԱՎԱՌԱԿՈՒՄ. այսուղի իր տնտեսությունը գյուղոցին:

«Վաճառքի համար գյուղացին վոչինչ չունի. նա այդպիսով իսկ զուրկ է, վորեւ բան գընելու հնարավորությունից և իր տան բոլոր կարիքները ստիպված ե հոգալ աճնպես, ինչպես կարող է: Տունն ինքն ե կառուցում ընտանիքի ոգնությամբ, արորն ու ցաքանը ինքն ե պատրաստում, տան կան կառասին-համարյա- ամբողջը փայտից՝ իրենց պատրաստածն ե, բացի մի քանի ափսելից ու գավաթից՝ վոր մնացել են նախապատերազմյան ժայռանակներից:

Կավի ամանները պատրաստում են տեղում՝ տնարությունները, կաշին նույնպես պատրաստում են գյուղական կաշվեգործները ամենապրիմիտիվ (հետաֆնաց) ձևերով, կոշիկներն ել լուրարանչուր գյուղացի իր համար ե կարում: Յեթե զիտելու լինենք շորերը, կը աեսնենք վոր այսուղի ել գյուղը յուա յե զնում սեփական ուժերով:

Հացն այսուղի կալսում են շղթայաձև կամերով, թեղի քամում են (երնում են) նույնպես

ձեռքով: Իհարկե, այդպես քամած հացահատիկների մեջ շատ փոշի, աղբ ե մնում և հսկայական ժամանակ ե կորչւմ: Աժքողջ գյուղում սիայն մեկն ունի թեղ մաքրելու մեքենա, վորը ձեռք ե բերել 10 - 11 տարի առաջ \*):

Իերենք այժմ նման մի որինակ հայկական իրականությունից:

«Արագածի լանջերում գտնվող Ղոնդազսազ գյուղում ապրում են քըզեր, վորոնք ունեն նահապետական անտեսություն: Ավաշուցելու համար վերցնենք այդ գյուղից Շաբրոյի ընտանիքը: Շաբրոյի ընտանիքը բաղկացած է 21 հոգուց, վորոնք բոլորն ել աշխատում են. ազամարդիկ զբաղվում են անասնապահությամբ ու հողագործությամբ, իսկ կանայք՝ տնալին աշխատանքներով:»

Տունը շինել են իրենք, գործիքներն ու տընային իրերը, կոշիկներն ու շորերը պատրաստել են իրենք: Փոխանակության հազվագյուտ դեպքը են պատահում:

Ի՞նչ բնորոշ հատկանիշներ ունի նկարագրքած գյուղացիական տնտեսությունը:

\*) Այս նկարագրությունը վերաբերում է 1923 թվականին. Այժմ հավանական ե, վոր գյուղատնտեսությունը բարձրացել ե և այդ գավառակում, ու գրությունը փոխվել և դեպի լավը:

Այենից առաջ աչքի յե ընկնում տեխնիկական չափազանց ցածը մակարդակը: Ամբողջ գյուղն ունի մի քամող մեքենա և այն ել ձեռք ե բերքած 10 - 11 տարի սրանից առաջ: Արտադրության սիջոցներն ինքնագործ, հատամնաց են, նըրանք մարդուց պահանջում են լարված աշխատանք, իսկ ոգտակար սրգյունք քիչ են տալիս:

Հիշատակենք նաև այն, վոր արտադրության միջոցները, ինքնագործ արորն ու ցաքանը, առանձին գյուղացիների մասնավոր սեփականությունն ե:

Բայց Նեղաշեցկի գավառակի տնտեսության ամենագլխավոր հատկանիշն այն ե, վոր այդ տընտեսությունն ապրանք չի արտադրում: Այսինքն՝ գյուղատնտեսության մրերեները չեն վաճառվում, շուկա չեն հանվում: Նեղաշեցկի գավառակի գյուղացիական անտեսություններն իրենք են արտադրում այն ամենը, ինչ իրենց անհրաժեշտ ե: Գյուղատնտեսական մթերքների ավելցուկը նըրանք չեն փոխանակում գյուղին անհրաժեշտ արդյունաբերական ապրանքներով: Նեղաշեցկի տնտեսությունը փակ տնտեսություն ե. նա չի շփում ժողովրդական տնտեսության մյուս մասերին: Հենց այդ ե նահապետական տնտեսությունը, այսինքն՝ այնպիսին, վորն իր կարիքները հոգում ե սեփական արտադրության մթերքներով վորը վաճառքի, շուկայի համար չի արտադրում:

Լավ հիշենք այս վերջին, գլխավոր հատկանիշը և շարունակենք առաջ անցնել:

Այժմ քննենք Լենինի մասնանշած յերկրորդ ու յերրորդ ձեերը. — մանր ապրանքային արտադրությունն ու մասնատիրական կազիտալիզմը: Յերկու հՅՈՒՂԱՑՈՒՅ «Գյուղացի Միկուլինի տըն-

Միկուլինի ՅԵՎ աեսությունն ունի 4 դեսկԱՐՈԶԿԻՆԻ ՏԵՏԵ: լատին վարելահոդ: Նա ու-

ՍՈՒԹՅՈՒՆԸ. նի միայն մի ձի ու մի կով Հողը մշակում ե՝ ինքը Մեկուլինը, նրա կինը և 15 տարեկան վորդին: 10 տարեկան աղջիկը նույնպես ոգնում է անտեսությանը: Միկուլինի խնամքի տակ ե գտնվում նրա հայրը, վոր 80 տարեկան, աշխատանքի անընդունակ ծերունի յեւ:

Միկուլինը յերբեք բարբակներ չի վարձում:

Միկուլինն ունի միայն մի գութան: Մտագիր ե սերմնացան մեքենա գնելու: Հողը մշակում ե հին ձեռվ՝ յեռադաշտով: Հաջող տարին ծախում ե մոտ 80 փութ հաց: Բացի զբանից նա քաղաքի շուկան ե հանում և բանջարեղեն, թոշուն: Ստացած փողով նա գնում ե չիթ, յերկաթ: Խնայած գումարները հավաքում ե սերնացան մեքենա գնելու համար»:

Ահա և գյուղացի Սկորոչկինը:

«Սովը՝ Սկորոչկինին զոռով առաջ տարավ: Սովի տարին 20 փութ հացով նա շարժիչ մե-

քենա գնեց: Նույն տարին նա ջրաղաց եւ շինեց: Մշակելու համար այժմ ունի մոտ 50 դեսյատին հող. Ջրաղացում վարպետն աշխատում ե որական առնվազն 12 - 14 ժամ, ստանալով ամսական 15 փութ ալյուր: Բացի զբանից նրա մոտ «հացափոր» աշխատում ե թոռը, վորի, հայրը ըսպանվել ե գերմանական կովում: Բավական ե ե տեսնել այդ տղայի ցնցոտիները, նրա գունատ ու վտիտ զեմքը, վոր խիստ տարբերվում ե իր համակակիցների առողջ դեմքերից, համոզվելու համար, վոր կերած հացը շատ թանգ ե նստում նրա վրա: Սկորոչկինը նրա մասին ասում ե, «Յես այդ տղային հոգուս վարձքին եմ պահում ու կերակրում, նա յել քիչ ու միշ ոգնում ե տնտեսության»: Ինքը Սկորոչկինը տանը շատ սակավ ե լինում, շրջագայում ե շարունակ ջրաղացի գործերով, վաճառում ե աշխատած հացը, գնում ե նոր նյութեր՝ ջրաղացի մասեր ու տնային իրեր:

Նույն պատկերն ե ներկայացնում հայկական իրականությունից վերցրած նազարի ու Փիշոսի որինակը:

Լենինականի գովառի, 7-րդ գավառամասի թուրքի. Գյուղայաբարա գյուղում տպրում ե նազարը, վորի ընտանիքը բաղկացած ե 21 անձից, ունի շնչաղատական հող, ունի մի զույգ յեզ,

Հ կով և մի եշ. ինքն ե ցանում իր հողը, վոչ  
մի բատրակ չունի և վոչ վոքի չի շահագործում:

Տարվա վերջում չիթ, աղ, նավթ գնելու հա-  
մար իր ցորենի ավելցուկը տանում ե շրջանա-  
յին կենտրոնը: Այստեղ նա փոխանակում ե  
կոռպերատիվում կամ ծախում և ստացած փողով  
գնում իր տնտեսության համար անհրաժեշտ ապ-  
րանքը:

Լենինականի 7-րդ գավառամասի Հաջի-Խա-  
լիլ գյուղում գոյություն ունի Փիլոս անունով մի  
կուլակ: Նա ունի 7 զույգ յեզ, 14 կով, 250  
վոչխար, 4 մատակ, մեկ ջրաղաց, 100 փեթակ  
և այլն: Ունի միենույն ժամանակ 7 բատրակ:  
8 անձի համար նրան ընկնում ե միայն 10 դես-  
լատին հող: Բայց գյուղում գոյություն ունեն  
չքավորներ, վորոնք զուրկ լինելով գյուղատնտե-  
սական գույքից, իրենց հողը մշակելու հնարա-  
վորություն չունեն: Ոգտվելով այդ գրությունից,  
Փիլոսն իր ինվենտարը տալիս ե գյուղացիներին,  
վորոնք Փիլոսի արտադրական միջոցներով աշխա-  
տելով, արդյունքի կես մասը տալիս են նրան:

Այժմ տեսնենք ինչ նմանություն կա մի կող-  
սից Միկուլինի ու Սկորոչկինի (կամ Նազարի ու  
Փիլոսի), իսկ մյուս կողմից Նեղաշեցկի գավա-  
ռակի (կամ Արագածի քրդական) տնտեսություն-  
ների միջև:

Նմանությունն այն է, վոր թե առաջին և թե  
տերկրորդ դեպքում արտադրության սիցոցները  
տերերի մասնավոր սեփականությունն են կազ-  
մում:

Բայց նահապետական տնտեսության գլխա-  
վոր հատկանիշը Միկուլինի ու Սկորոչկինի մոտ  
մենք չենք գտնի: Հակառակ Նեղաշեցկի գավա-  
ռակի գյուղացիների՝ Միկուլինն ու Սկորոչկինն  
իրենց սթերքների մի մասը վաճառում են: Սկո-  
րոչկինը վաճառում ե սեծ մասը, Միկուլինը՝  
փոքր մասը: Միկուլինի ու Սկորոչկինի տնտե-  
սություններն այլևս փակ տնտեսություններ չեն,  
ինչպիսին ե Նեղաշեցկի գավառակում: Իրենց  
հացի և այլ մթերքների սիջոցով նրանք կապ են  
հաստաել յերկրի մեջացած տնտեսության հետ:

Նրանց տնտեսությունն ապրանքային տն-  
տեսություն ե, վորն աշխատում ե շուկայի համար  
(Սկորոչկինի տնտեսությունը մեծ չափով, Մի-  
կուլինի տնտեսությունը՝ փոքր չափով):

Բայց Միկուլինի և Սկորոչկինի տնտեսու-  
թյունների միջև բավական տարբերություն կա:  
Յեթե Միկուլինի ձեռքն ընկներ մեր այս գրքույկը,  
նա թերևս ամենայն իրավամբ նեղանար. կասեր  
«ի՞նչ եք ինձ Սկորոչկինին թայ անում, յես կյան-  
քումս կուլակ չեմ լեղել»:

Ենք իրոք, Միկուլինի տնտեսությունն աշ-

խատանքային տնտեսություն և Միկուլինն ինքն է մշակում իր տնտեսությունը։ Նա բատրակներ չունի։ Միւնուն ժամանակ Միկուլինը վաճառում է իր ավելցուկի փորոշ մասը։ Այնպիսի արնատեսությունները, ինչպես ին Միկուլինին են, լեռնինը «մանր ապրանքային արտադրության» շարքն է դասում։

Իսկ Սկարոչկինն, ինքը շատ բիշ է աշխատում, նա միշտ ըրջագայում է, և վաստակում ի հաշիվ վարձու բանվուների—բայց ակնհայտ աշխատանիք։ Վաստակած փողով Սկորոչկինն ընդարձակում է իր արտադրությունը, նոր բանփորներ են վարձում։ Սկորոչկինը շահագործում է ուրիշի աշխատանքը, նրա տնտեսությունն աշխատանքային չեն, այլ շահագործող, կապիտալիստական։ Սկորոչկինը կապիտալիստ է, մանր կապիտալիստ, թեև Սկորոչկինները սիրում են իրենց աշխատավոր անվանել։ Այնպիսի տնտեսությունները, ինչպիսին Սկորոչկինին են, լեռնինը «մասնատիրական կապիտալիզմի» շարքն է դասում։

ՆԱԽԿԻՆ ՎԵՍՏԻՆ-  
ՀԱՌԻԶԻ ԳՈՐԾԱ-  
ՐԱՆՆ. Այժմ քննենք տնտեսական  
չԱՌԻԶԻ ԳՈՐԾԱ-  
ՐԱՆՆ. չորրորդ ձեր—պետական կա  
րմանը. պիտուլի զմբ. Դրա համար  
անցնենք նախկին Վեստինհառուզի գործարանը։  
«Նախկին Վեստինհառուզի գործարանը գըտ-

նվում է Յարոսլավլ քաղաքում։ Կոնցեսիոն պայմանագրի իրավունքներով նա պատկանել է ամերիկյան և անգլիական կապի ռալիստներին, վորոնք այդ գործարանից մի ժամանակ մեծ յեկամուտներ են ստացել։

Ինչպես հայտնի լե 1922 և նույնիսկ, 1923 թվին արգելակների (առորմազ) խիստ կարիք եր զգացվում և այդ գու ծարանն եր ԽՍՀՄ յերկաթուղիններին արգելակներ տալիս։

1923 թվին գործարանը մեծ պատվեր եր ստացել։ Պատվերը ժամանակին կատարեց։ Կատարեցին, ինարկե, վոչ թե կապիտալիստները, այլ սեր բանվորները։ Կապիտալիստները միայն մի ն գատակ ելին հետապնդում, այն ե՝ վորքան կարելի լե շատ վաստակել։

Հանկարծ ամիրիկացինների գործերը վատ գնացին։

Նրանք կարծում ելին, վոր իրենք նույնպիսի պատվեր պիտի ստանան և 1924 թվին։ Բայց բանվորական պետությունն այլիս արգելակների կորիք չեր զգում։ Մոսկվայում արգելաշխատում եր պետության սեփական գործարանը։

Գործարանի վարչության հաշիվները խառնվեցին։ Կառավարիչը գես ու գեն եր ընկնում, պատվիրողներ փնտրում։ Նա նույնիսկ մտադիր

եր պատվերներ տռաջարկել ուրիշ յերկրներին՝  
Եստոնիային, Լատվիային, բայց գլուխ չեկավ:

Իսկ գործարանը շարունակում եր աշխատել:

Այդ ըոսկելից բանվորների համար սկ որեր  
են սկսվում: Աստիճանաբար շտատները կրծատ-  
վում են, աշխատավարձն ուշանում ե: Բանվոր-  
ների գրությունն որեցոր վատանում ե:

Ի՞նչ հատկանիշներ ունի տնտեսական այդ  
միավորը:

Առաջին յեզրակացությունը, վոր մենք ա-  
նում ենք Վեստինհաուզի կոնցեսիոն գործարա-  
նում, այն ե, վոր այդ գործարանումներկայացված ե  
յերկու դասակարգ: Բանվորական ամբողջ ժամ-  
սայի դեմ կանգնել ե կապիտալիստների ներկա-  
յացուցիչը, նա աշխատում ե վորքան ննարավոր  
ե (ի հաշիվ բանվորների) շատ փող վաստակել:

Հանձին գործարանի տեսչի՝ (զիրեկտորի)  
բանվորները տեսնում են իրենց դասակարգային  
թշնամուն: Մենք այդ թշնամուն դեռ հանդուր-  
ժում ենք, վորովհետև բանվոր դասակարգը դեռ  
չի կարող մշակել յերկրի բոլոր հարստություն-  
ները: Մենք աշալուրջ կերպով հետեւում ենք,  
վորպեսզի կոնցեսիոները կատարի այն բոլոր  
պարագանությունները, վոր նա հանձն ե առել  
բանվորական պետության հանդեպ:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, նմանու-  
թյուն ե ստացվում Վեստինհաուզի գործարանի  
և Սկորոչկինի տնտեսության միջև: Յեզ կոնցե-  
սիոները և Սկորոչկինը շահագործում են ուրիշի աշ-  
խատանքը: Ճիշտ ե, Սկորոչկինը միայն 2 մշտական  
բանվոր ունի, իսկ կոնցեսիոները մինչև մի քանի  
հարյուրը: Բայց դրանից գործի եյությունը չի  
փոխվում. թե այստեղ և թե այստեղ կապիտա-  
լիստը հարստանում ե բանվորների վարձու աշ-  
խատանքի հաշվին, թեպետ և Սկորոչկինը յերբեք չի  
յել յերազել, վոր բանվորների շահագործման մեջ  
ինքը պարոն Հոլլդմերտշենի (Վեստինհաուզի  
գործարանի կառավարչի) ընկերն ե:

Սակայն այս անգամ ել տնտեսական այդ  
յերկու միավորները բոլոր կողմերով նման չեն  
իրար: Կոնցեսիոների գործարանի և կուլակ  
Սկորոչկինի տնտեսության մեջ տարբերությունը  
չափազանց մեծ ե:

Այդ գործարանը պատկանում ե պետության,  
նու կապիտալիստին տրված և միայն ժամանա-  
կագորապես՝ պետության համար շահավետ պայ-  
մաններով: Վերստինհաուզի գործարանում կա-  
պիտալիստն աշխատել ե պետության հսկողու-  
թյան տակ:

Այնքան ժամանակամիջոցում, վորքան ժա-  
մանակով տրված և կոնցեսիան, կոնցեսիոները

պարտավոր ե կատարել արտադրական վորոշ  
ծրագիր, արտադրությունից վորոշ հատկացումներ  
պիտի անի հուգուտ խորհրդային պետության։  
Այն ժամանակ, յերբ կոնցեսիոները, վորը վեցը երեք  
եր վեստինհառուղի գործարանը, չկարողացավ  
կատարել կոնցեսիայով հանձն առած պարտակա-  
նությունները, պետուրյունը յետ վեցրեց զոր-  
ծարանը։ Սկորոչկինի անտեսության վերա-  
բերյալ այդպիսի անմիջական հսկողություն չկա-  
պետության կողմից, չկա և պայմանագիր նրա  
և պետության միջն։ Զրադացը նրա սեփականու-  
թյունն ե։ Նա ինչքան ել իր գործը վատ տանի,  
նրա զրադացը չեն խլի։ Պետությունը միայն պա-  
հանջում ե Սկորոչկինից, վոր վճարի սահմանված  
հարկերը, և միայն այդ հարկերի միջոցով ե, վոր  
պետությունը սահմանափակում ե նրա շահա-  
դիտական ախորժակը։

Այսպես ուրեմն, վերստինհառուղի գործարա-  
նում, ինչպես և յուրաքանչյուր այլ կոնցեսիա-  
յում, կապիտալիստը ստիպված ե աշխատել պե-  
տության անմիջական հսկողությամբ, վորովհետեւ  
ձեռնարկությունը պետության սեփականությունն  
ե։ Հենց դա ե անտեսական այդ միավորի ամե-  
նագլխավոր առանձնահատկությունը։ Այս թե  
ինչու վերստինհառուղի գործարանը պետք ե դա-

100  
100  
100  
100

սել անտեսական այն ձեխն, վոր Լենինն ան-  
վանել ե պետական կապիտալիզմ

ՍՏԱԼԻՆԻ ԱՆՎԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ. Մեզ մնում ե  
միայն քննել անտեսական հինգերորդ՝ սոցիալիս-  
տական ձեր, և մենք ավարտած կլինենք մեր  
յերկրում գոյություն ունեցող անտեսական ձեերի  
քննությունը։

Ահա Ստալինի անվան գործարանը (Դոնեցի  
ավագանում)։ Ստալինի անվան գործարանը պատ-  
կանում ե պետությանը։ Գործարանում աշխա-  
տում ե 15 հազարից ավելի բանվոր։ Այդ հսկա-  
յական գործարանի մասին գաղափար կազմելու  
համար բերենք հալոցային վառարանների աշխա-  
տանքների նկարագրություններից մեկը։

«Հալոցային վառարանների վիթխարի զանգ-  
վածները յերկաթե կողելով համարյա մինչև  
յերկինք են բարձրանում։ Ստորոտից մինչև կա-  
տարները նրանք ծածկված են յերկաթե թիթեղ-  
ներով։ Նրանց ծալրերը թիթե ծխում են, ինչ-  
պես հարբումների բերաններ։ Մարդիկ, ձիերը,  
սալլերը, շոգեշարժերը, վաղոնները յերկաթուղա-  
զծի հողաթումը—ամեն ինչ խաղալիքի տեսք ե  
ստանում այդ հսկաների վոտքի տակ։ Դժվար ե  
պատկերացնել, ուզում ուզում գնում ապահովությունը յու-  
րաքանչյուր՝ մեխուր, պեկանել թիթեղը, ամեն



ինչ պատրաստված ե մըջուն - մարդու ձեռքով, վոր անքան չնշին ու վողորմելի յե իր իսկ ըստեղծագործության տուած:

Յեկ այդ մըջունները արագ-արագ կիտում են հանքը, կոկսը, հողեցնող նյութը, և ապա՝ շոգեմեքենան մի ակնթարթում այդ բոլորը բարձրացնում ե գեղի վեր և լցնում հրեշի շիկացած լերախը: Յեկ այդ աժդահան անընդհատ կանում ե տասնյակ, հարյուր հազարավոր փթեր»...:

Ստալինի անվան գործարանում գործադրվում են տեխնիկայի վերջին նվաճումները: Աշխատում են կատարելագործված մեքենաներ, գորոնք ունեն բարձր արտադրողականություն: Արտադրությունը համարյա ամբողջովին մեքենայացրված ե, այսինքն ձեռքի աշխատանքը փոխարինված ե մեքենայով:

Այնպիսի գործարաններում, ինչպիսին ե Ստալինի անվան գործարանը, մարդու աշխատանքը միայն մեքենայի ղեկավարությանն ե համգում:

Չայած, վոր գործարանում կան հոկայական թվով համբարություններ ու արհեստանոցներ, այնուամենայնիվ նա կազմում ե արտադրական մի ամբողջություն: Հոկայական թվով բանվորներից յուրաքանչյուրն ունի իր վորոշ աշխատանքը, նրանցից ամեն մեկը գործարանի մի վորքիկ պտուական ե:

Ծանոթանանք փոքր ինչ արդ գործարանի մոտ անցյալին: Գործարանը ապրել ե քաղաքացիական պատերազմի ծանր տարիները: Սպիտակ գվարդիականները բոլոր ուժերով ձգում եին Դոնեցի ավագանը կտրել Խորհրդային հանրապետությունից: Յեկ գործարանը շատ անգամ ե ձեռքից ձեռք անցել:

Գիտեք, — ասում եին սպիտակները բանվորներին, — ձեր ընկերների մի մասը զնացել ե Կարմիր բանակը, իսկ մյուս մասը մնացել ե պաշտպաններու որինավոր տերերից գողացված գործարանը:

Բանվորները ստիպված եին կրելու ցրտի ու քաղցի սարսափները: Բայց բանվորների հիմնական կորիզը, այնուամենայնիվ, գործարանը չթողեց: Քանի վոր, այդ ձեռնարկության վրա բանվորները նայում եին, վորպես իրենց դասակարգի նեցուկի, ամրոցի վրա: Քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո գործարանը կենգանություն ստացավ և տարեցտարի ավելացնում ե իր արտադրությունը:

Բերենք բանթղթակցի մի փոքրիկ նկարագրությունը գործարանալին բանվորների պատգամավորական ժողովի մասին: «Զեկուցում ե գործարանի տեսուչը, մի հին բայցեկի բանվոր, խոսում ե արտադրությաննվաճումների մասին: Բար-

ձրացել ե յուրաքանչյուր բանվորի արտադրողականությունը: Իջել ե ինքնարժեքը: Գլխավոր թերությունն առ այժմ աշխատանքի դադարներն են, վորոնք լերբեմ տեղի յեն ունենում բավորների պատճառով»:

Դեռ զեկուցողը խոսքը չեր ավարտել: 20 հոգուց ավելի ցուցակազրկել են ընդիմախոսելու: Բանվորները բանավիճում, քննադատում են վարչությանը: Այսինչ աեղ անփութություն ե նկատվում, մի այլ տեղ պարզապես անտնտեսարարություն:

Չեք յերբ նստած լսում ես այդ ճառը, քեզ համար շատ բան հասկանալի յե դառնում:—Այդպես կարող են խոսել միայն նրանք, ովքեր ըզգում են, վոր իրենք են գործի տերը, նրանք, վորոնց համար գործարանը սոսկ գոյության աղբյուր չե, այլ սրտին մոտիկ, հարազատ մի գործ, վորի մասին մտահոգված են, վորի զարգացման համար աշխատում են համառորեն»:

Ի՞նչ յեզրակացություն կարող ենք անել այս նկարագրություից: Ինչու յենք մենք Ստալինի անվան գործարանը սոցիալիստական անվանում: Ամենից առաջ՝ այստեղ չկա արտադրյան միջոցների մաս ավոր սեփականություն:

Մասնատիրական-կապիտալիստական (Սկորոչկինի) և մանր-ապրանքային (Միկոլինի) կամ

նահապետական անտեսության մեջ (Նեղաշեցկի գավառակում) արտադրության միջոցները մասնավոր սեփականություն են կազմում: Պետական կապիտալիստական ձեռնարկություններում կապիտալիստը ժամանակավորապես (մինչև պետության հետ կնքած պայմանագրի ժամանակը լրանալը) արտադրության միջոցների տերն ե: Իսկ Ստալինի անվան գործարանում արտադրության միջոցները պատկանում են բանվորական պետությանը, այսինքն՝ ամբողջ բանվոր դասակարգին:

Մուսս հատկանիչն ել այն ե, վոր Ստալինի անվան գործարանում ներկայացված ե միայն մեկ դասակարգ՝ բանվոր դասակարգը: Սրտագրությունը կառավարում է բանվոր դասակարգն իր պետության միջոցով: Վեստինհաուզի գործարանում բանվորները հանձին կոնցեսիոններ տեսչի տեսնում են իրենց դասակարգային թշնամուն: Իսկ Ստալինի անվան գործարանում նրանք տեսչի վրա նայում են, վորպես բանվոր դասակարգի գործակատարի վրա, ոգնում են տեսչին, վորպեսզի նա կարգի բերի արտադրությունը: Այստեղ կապիտալիստ չկա, վորպիսզի հարստանա վարձու բանվորների հաշվին: Բանվորներն աշխատում են իրենց համար, իրենց արդյունաբերության, իրենց պետության համար: (Պետական

ձեռնարկությունների մասին ավելի մանրամասնորեն կր խոսենք զրույցի ընթացքում):

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԵՎԵՐԻ ԱՐԴՎԿԵՍ ՈՒՐԵԹԻ, մենք ծաբւորոշ ԿՈՂՄԵՐԼ ՆՈԹԱԳԱՆՔ հինգտարբեր տրնտեսական միավորներին։ Նրանցից յուրաքաչյուրը հանդիսանում է կենինի թված տնտեսական ձևերից վորեկ մեկը։

Ինչպես ելինք մենք վորոշում տնտեսական այս կան այն ձեզ։ Մենք քննության ելինք առնում, թե տեխնիկալի ինչ աստիճանի վրա յե կանգնած տնտեսությունը, ում են պատկանում արտադրական միջոցները, ով ե կառավարում արտադրությունը, ներկայացված ե սիայն բանվոր դասակարգը (ինչպես Ստալինի անվան գործարանում), թե իրար դեմ կանգնած են յերկու դասակարգ (ինչպես Վեստինհաուզելի գործարանում), ինչպիսի կապ կա տվյալ տնտեսության կամ ձեռնարկության և մնացած տնտեսության միջև։ Արդյոք, պարփակված ե ինքն իր մեջ տվյալ տնտեսական միավորը (ինչպես Նեղաշեցկի տնտեսությունը) թե փոխանակության միջոցով կապված ե մնացած տնտեսության հետ։

Գիտելիքների այն պաշարով, վոր մենք ըստացանք առանձին որինակների ուսումնամիջությունից, կրկին վերադառնանք կենինից վերցրած մեջբերման, վորի մասին մենք հիշեցինք զըուցի

սկզբում։ Հերթով կանգ առնենք յուրաքանչյուր տնտեսական ձեի վրա և արդեն ամփոփ կերպով նշենք նրանց բոլոր հաւկանիշները։

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ Այս ամենահետամնաց տնտեսաւությունին կան ձեի որինակը մեզ տվեց Նեղաշեցկի գավառակը։ Ինչպես իմացանք, այս տնտեսությունն իր բոլոր կարիքները հոգում ե իր սեփական արտադրությամբ և շուկայի համար չի արտադրում։ Բնական տնտեսությունը ապրանք չի փոխանակում մյուս տնտեսությունների հետ։

Հետզիետե, յերբ զարգանում ե ժողովրդական տնտեսությունը, յերբ զարգանում ե տպշրմքների փոխանակությունը, մեզանում բնական տնտեսությունն արգեն անհայտանում ե։ Այժմ, հավանական ե, վոր Նեղաշեցկի գավառակի տնտեսությունն արգեն դատարել ե բնական տնտեսություն լինելուց և սկսել ե ապրանք արտադրել շուկայի համար։ Ամենից հաճախ բընական տնտեսությանը մենք հանդիպում ենք ԽՍՀՄ ծալքամասերում՝ հետամնաց ազգությունների մեջ։

ՄԱՆՐ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ Սրա որինակը մեզ տալիս ե ԱՐՑԱՌՈՒԹՅՈՒՆ գյուղացի Միկուլինի ալնտեսությունը։ Դա աշխատանքալին տնտեսությունն ե, վորը չի շահագործում ուրիշի աշխա-

տանքը՝ բայց իր մթերքների մի մասը վաճառում է և ստացած դրամով ձեռք բերում իր տնտեսության համար անհրաժեշտ ապրանք։ Մեր յերկրում գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը Միկուլինի տնտեսության պես են, այսինքն մանր ապրանքային տըստեսություններ են։

Չափազանց մեծ սխալ կը լիներ այն տնտեսությունները, ինչպես Միկուլինի տնտեսությունն ե, կապիտալիստական համարել, ասելով, թե քանի վոր Միկուլինը մանր սեփականատեր ե, ուրիշն նա կապիտալիստ ե։ Լենինը սիշտ գյուղացնում եր նման սխալից։ Գյուղացիական աշխատանքային տնտեսությունը, վորն իր արտադրության ավելցուկը վաճառում ե, բայց չվոգտվում մշտական վարձու աշխատանքից, վոչ մի գեպքում չի կարելի շահագործող, կապիտալիստական համարել։ Այնպիսի աշխատանքային տնտեսություններ, ինչպիսին Միկուլինի տնտեսությունն ե, մեր գյուղերում մեծամասնություն են կազմում, տնտեսական այդ ձեռք գերիշխողն ե մեր գյուղում։

ՄԱՍՆԱՏԻՐԱԿԱՆ Մենք այս ձերին ծանոթացրի ԱՄՊԻՏԱԼԻՉՄ ցանք Մկորոչկինի տնտեսության միջոցնվ։ Այս ձերին պատկանող տնտեսությունները շահագործող են, այսակա շահագոր-

գում ե վարձու աշխատանքը։ Մատցած յէկամուտըն կապիտալիստի գրպանն ե մանում։

Մկորոչկիններ շատ կարելի յե գտնել թե գյուղերում և թե քաղաքներում։

Գյուղերում նրանք կուլակներն են, առևտրականները, վաշխառուները կամ հարստացած արնախագործները, վորոնք մի շարք վարձու բանվորներ ունեն։

Քաղաքում տնտեսական կապիտալիստը ամենայենանգույն կերպով հանդիս ե գալիս առևտրի ասպարիգում, մասնավոր կապիտալն առանձնապես ուժեղ ե մանրածախս առևտրում։ Բայց նա խցկվում ե նաև մանր արդյունաբերության մեջ։

Գյուղում այնպիսի կուլակային—կապիտալիստական տնտեսությունները, ինչպիսին Մկորոչկինի տնտեսությունն ե, համեմատած գյուղացիական տնտեսությունների ընդհանուր ընակի հետ, փոքր տոկոս են կազմում։

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՂԻՑԱԼԻՍ- Մենք այդ տնտեսությանը ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ թյանը ծանոթացանք նախկին Վեստինհառուզի գործարանի միջոցով։ Այդ տնտեսության մեջ գոյություն ունի բանվորական աշխատանքի շահագործում։ Նա մասնավոր կապիտալիստական տնտեսությունից ատրբերվում ե նրանով, վոր արտադրության միջոցները

պետության են պատկանում, իսկ ձեռնարկության զլուխն է կանգնել կապիտալիստը։ Նա այդտեղ տիրում և պետությունից ժամանակավորապես վարձով վերցրած արտադրական միջոցներին, կապիտալիստն այդտեղ աշխատում և պետության հսկողությամբ։ Տնտեսական այդ ձեին են պատկանում բոլոր կոնցեսիաները, մասնավոր վարձակալական ձեռնարկությունները։

Պետական կապիտալիստական տնտեսությունը Խորհրդային Միության մեջ քիչ ե զարգացել։ Մեր յերկրի կոնցեսիոն կապիտալի գումարն ընդամենը 38 միլիոն ե։ Կոնցեսիոն ձեռնարկություններում աշխատող բանվորների թիվը ընդամենը հասնում է 50 հազարի։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ Տնտեսության այս ձեին ե ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ. պատկանում ամենից առաջ պետական արդյունաբերությունը։ Մեր բերած որինակներում այդ ձեի ներկայացուցիչն եր Մտալինի անվան հակայական գործարանը։ (Մեզ մոտ Հայաստանում՝ «Արարատ»-գործարանը), Նրա զլխավոր հատկանիշն այն ե, «վոր և արտադրության միջոցները և այն հողը, վորի վրա կառուցված ե ձեռնարկությունը և թե ամբողջ ձեռնարկությունը պետությանն ե պատկանում»։ (Լենին)։ Այդ ձեռնարկությունները հանձին խորհրդային իշխանության՝ պատկանում են բանվոր

դասակարգին։ Այդ գործարաններում ներկայացված ե միայն մեկ դասակարգ, բանվոր դաստկարգը, վորն իր պետության միջոցով ղեկավարում ե արտադրությունը։

ՊԱՅՔԱՐ ՏՆՏԵՍՈՒԿԱՆ ՄԵՆՔ ծանոթացանք ՏԱՐԲԵՐ ԶԵՎԵՐԻ ՄԻՀԵՎ տնտեսական հինգ ձեւերին։ ՄԵՆՔ քննության առանք նրանցից յուրաքանչյուրն առանձին։ Սակայն սխալ կրկներ կարծել, վոր այդ տարբեր ձևերը գոյություն ունեն իրարից միանգամայն անկախ՝ առանձին-առանձին։

ՅԵՎ ԿՐԱՆՔ իսկապես վոր այդպես չե։ Մեր տնտեսության առանձին մասերն իրար հետ շփման մեջ են մտնում, ձգտում են հաղթահարել մեկը մյուսին։ Մեր տնտեսությունը մի տեղում կանգնած չի մնում, շարունակ փոփոխության են յենթարկվում նրա առանձին մասերը։

ՎԵՐԳՆԵՆՔ, որինակի համար, Միկուլ'նի տնտեսությունը։ Կարող ե պատահել, վոր Միկուլինին կը հաջողվի փող հավաքել, մշտական աշխատանքի համար նա բարակներ կը վարձի, և նրա տնտեսությունն աշխատանքայինից կը դառնա մասնավոր կապիտալիստական։ Նեղաշեցկի գավառակի զբուղացիները միշտ ել ալդպիսի փակ տնտեսություն չեն վարելու։ Կարող ե պատահել, վոր նրանք արդեն սկսել են արտադրել շուկայի

համար։ Յեվ Նեղաշեցկի գավառակի նախնական տնտեսությունը պետք է գասվի մանր ապրանքային տնտեսության շարը։

Պետական արդյունաբերությունը, վոր սոցիալիստական շինարարության հիմքն է, ստիպված է լինում կազ հաստատել մասնավոր առևտրականի, այսինքն՝ կապիտալիզմի ներկայացուցչի հետ։ Պետական ու կոոպերատիվ առևտուրը դեռ բավականաշափ զարգացած չեն իրենց ազգանքներն անմիջաբեր սպառողին մոտեցնելու համար և հաճախ հարկ է լինում դիմելու մասնավոր առևտրականի ծառայությանը։

Տնտեսական զանազան ձեռքը ներհյուսված են իրար հետ և կռվում են իրար դեմ։ Կորվը գլխավորապես տեղի յեւ ունենում տնտեսության սոցիալիստական և կապիտալիստական տարրերի միջև։

Թե գյուղական կուլտիվ, կամ քաղաքի առևտրականը, թե կոպերացիայի մեջ խցկած խորթ տարրը, բոլորն ել կռվում են մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական մասի դեմ։ Կուսակցության տնտեսական ամբողջ քաղաքականության նպատակն է, սպահովել տնտեսության սոցիալիստական մասերի աստիճանական հաղթանակը տնտեսության մյուս ձեռքի նկատմամբ։ Պետական խոշոր ալ գյունաբերության դեկավա-

րությամբ բանվոր դասակարգը ձգտում է վերակերտելու յերկրի ո մբողջ անտեսությունը։ Առանձնապես կարեոր է վերկերտել աշխատանքալին (մանր – ապրանքալին) հողագործական տասնյակ սիլիոնավոր տնտեսությունները։ Զանգան Սկորոչկիններ ձգտում են իրենց հետեւից տանել աշխատանքալին գյուղացիական տնտեսությունը։ Մեր խնդիրն է՝ այնպես անել, վոր զյուղացիական տնտեսությունն ընթանա սոցիալիստական ուղիով։

Այդ գործում խորհրդային պետությանն ոգնում է այն հանգամանքը, վորնրա ձեռքին են զըտնվում տնտեսության այսպես կոչվող իւլյոլ բարձունեցը (այս խոսքը առաջ է յեկել ուղական կյանքում, վորտեղ, իշխող են կոչվում այն բարձունքները, վորոնց զրավելով արգեն, հեշտությամբ կարելի յեւ սպակոծել ամբողջ ըըջակալըում գտնվող հակառակողին)։

Իսկ վորոնք են բանվոր դասակարգի պետության ձեռքում գոնվող տնտեսական բարձունքները։

Իրանք են. —

1) Խոշոր սոցիալիստական պետական արդյունաբերությունն.

2) Ազգայնացրած հող.

3) Տրանսպորտ.

- 4) Բանկեր և վարկ.  
 5) Արտաքին առևտությունը:  
 իր ձեռքումն ունենալով արդարիսի կարեվորագույն դիրքեր, պետությունը կարող և վոչ միայն չվախենալ մասնավոր կապիտալի աճումից, այլ և կարող ե գյուղացիական բաժանման մանր տնտեսությունը վերակերտել: Այս խնդրում հսկայական ծառայություն ե մատուցում և կոռպերացիան, վորի մասին մենք կը պատմենք հետագա զրույցներից մեկում, վորտեղ կիսունք այն մասին, թե տնտեսական ինչպիսի քաղաքականություն ե վարում մեր կուսակցությունը:


### ՀԱՐՑԵՐ

- Տնտեսական վեր ձերին ե պատկանում այն ձեռնարկությունը, վորտեղ զու աշխատում ես:
- Ինչու պետական խոշոր արդյունաբերությունը մեր տնտեսության առաջավոր մասն ե հանդիսանում:
- Ժողովրդական տնտեսության վեր մասերն են պետական կապիտալիզմին պատկանում:
- Ինչու այնպիսի տնտեսություններն, ինչպիսին Միկուխինն ե, չի կարելի կապիտալիստական անվանել:

5. Ինչով ե արտահայտվում տնտեսական զանազան ձերին միջև տարվող պայքարը:

### ԱՇԽԱՏԱՆՔ

- Գրիր կամ պատմիր այն մասին, թե պետական ինչ խոշոր գործարաններ գիտես դու:
  - Մյուս ընկերներիդ հետ միասին կազմիր «մեր յերկրի տնտեսական հինգ ձերի» աղյուսակը: Ազյուսակի ձախ կողմում գրիր ձերի անունները, աջ կողմում՝ այդ ձերի գլխավոր հատկանիշները:
  - Ցեղե կազ ունես գյուղի հետ, պատմիր թե ինչ տիպի տնտեսություններ կան անտեղ:
-



ԳԻՆՆ Ե 12 ԿՈՊ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0193371

28498